

**Թաղևոսյան Հասմիկ (ՀՀ ԳԱԱ լեզվի
ինստիտուտ)**

**ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԱԽՏԱՆՈՒՆԵՐԸ
«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ» ԵՐԿՈՒՄ (XIIIդ.)**

Միջին հայերենով շարադրված բժշկարանների շարքում առանձնա-
նում է 13-րդ դարում *ստեղծված «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»*¹
ձիաբուժական ձեռնարկը: Վերջինս Սմբատ Գ-ի հրամանով (1296-1268)
կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը, որին ձեռագիրը գրելու հարցում օժանդակել
է Թորոս քահանան: Այս բժշկարանը կարևոր սկզբնաղբյուր է միջին հայերենի
ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից. Այս երկում
արձանագրված են բազմաթիվ բառեր, որոնք գործածվում են առաջին անգամ
կամ եզակի վկայությամբ: Դրանց մի ստվար մասը կազմում են բժշկական
բառանունները՝ ախտանուններ, բուսանուններ, դեղանուններ: Ինչպես
միջնադարյան բժշկարաններում առհասարակ, ԲՁ-ում էլ արաբերենից,
հունարենից և այլ լեզուներից փոխառված բժշկական տերմինների կողքին
արժեքավոր են հատկապես այդ բառերի հայերենաստեղծ համարժեքները:
Մեր լեզվի բառակազմական եղանակներով ստեղծված նոր տերմինները
հիմնականում իրենց վրա կրում են կամ փոխատու լեզվի կամ մեր
ժողովրդական մտածողության կնիքը: Ուշագրավ են հատկապես
կենդանիների անվանումներով բաղադրված ախտանունները, որոնք
մատնանշում են կենդանիներին, մասնավորապես ձիուն, նաև մարդուն
վերաբերող մի շարք հիվանդություններ:

ԲՁ-ում գործածվել են կենդանիների (*արծիվ, գայլ, գորտ, ուղտ, խեցգետին, հավ, ձի* (քուռակ), *մուկ, մրջյուն, պախրա*) անվանումներով
կազմված տասնմեկ նոր ախտանունները, որոնք չեն հանդիպում գրաբարյան
մատենագրության մեջ և գործուն կիրառությամբ աչքի են ընկնում հենց
«Բժշկարան ձիոյ»-ում*:

Նշված բժշկարանում կենդանանուններով բաղադրված ախտանուն-
ները կարելի է բաժանել երեք խմբի:

ա) **Իմաստային փախառություններ:** ԲՁ-ում երկու կենդանանուններ
այլ լեզուների հետևողությամբ կիրառվել են նաև իբրև հիվանդության տեսակ՝

¹ *Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ* (ԺԳ դար), աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասյա-
նի, Ե., 1980: (Այսուհետ տեքստում՝ ԲՁ համառոտագրությամբ, բերվող օրինակների էջերը
կնշվեն փակագծերում):

*Քննվող ախտանուններից վեցը ԲՁ-ից բացի հանդիպում են նաև այլ բժշկարաններում:

այդպիսով ստանալով նոր իմաստ:

Գորտ գոյականը գրաբարյան մատենագիտության մեջ հանդիպում է միայն կենդանու անվանում նշանակությամբ, մինչդեռ ԲԶ-ում *գորտ*-ը կիրառվել է բժշկական տերմինի իմաստով՝ նշանակելով «լեզվի տակի գեղձի կամ հյուսվածքների բորբոքային ուռուցք»². «Վասն որ ի բերանն *գորտն* ելնէ» (42): «Յադագս, որ *գորտն* ելնէ ի բերանն» (156):

Հ. Աճառյանը, հետևելով Նորայր Բյուզանդացուն, վերոհնչյալ *գորտն* մեկնում է որպես «ձիու կամ եզան լեզվի տակի թաղանթային ծալք», որն էլ համապատասխանում է ֆրանսերեն grenouillette գորտ-ի «լեզվի տակի այտուց» նշանակությանը³:

Պետք է նկատենք, որ *գորտ*-ի վերոհիշյալ նշանակությունը կա և՛ հունարենում (βάτραχος–*vátrachos*) և՛ լատիներենում (*rana*), նաև՝ արաբերենում (غفادع *ḡafadac*), և դժվար է ասել, թե ո՞ր լեզվից է միջին հայերենը փոխառել տվյալ իմաստը, բայց կարելի է ենթադրել, որ նախնականը հունարենն է, որից էլ ամենայն հավանականությամբ փոխ են առել մյուս լեզուները, սակայն նկատի առնելով միջնադարում արաբերենի ավելի մեծ ազդեցությունը, ավելի հավանական է հենց արաբերենից փոխառված լինելը:

Գորտն իբրև ախտանուն մինչ ԲԶ-ն հանդիպում է 13-րդ դարի հայտնի բժիշկ Գրիգորիսի բժշկարանում՝ սույն տերմինի բացատրությամբ. «Եւ այլ ուռից, որ ելնէ բերանն ներքն լեզուին և անուանի *գորտն*, զի *գորտն* ի նման է»⁴:

Այս տերմինը, լայն գործածություն չունենալով, մնացել է միջին հայերենի շրջանում:

Ուշագրավ է **խէչեփար / խէչիփար / խիչիփար / խաչեփար / խաչիփար** (բոլոր տարբերակները հանդիպում են նաև *ռ*-ով) գոյականի կիրառությունը ԲԶ-ում: «Նոր հայկազեան բառարանը» վերջինս բերում է իբրև ռամկորեն բառ՝ «խեցգետին» կենդանու նշանակությամբ, և գործածության համար նշում միջնադարյան գրական հուշարձանները, մասնավորապես բժշկարանները⁵: Հ. Աճառյանը բառը համարում է *խէչ* «կողքը» և բարբառային *փառ* «թև» արմատներից կազմված: Ըստ նրա՝ բառն այդպես է կոչվել տվյալ կենդանու երկու կողքի չորս զույգ թևերի պատճառով⁶: Բառը կիրառելի է նաև հայերենի մի շարք բարբառներում⁷:

²Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 149 (Այսուհետ՝ ՄՀԲ):

³Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 585: (Այսուհետ՝ ՀԱԲ):

⁴Գրիգորիս, *Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց*, Ե., 1962, էջ 98: (Այսուհետ բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ԳԲ համառոտագրությամբ):

⁵Տե՛ս Նոր բարգիւրք հայկազնեան լեզուի, Վենտիկ, 1836-1837, հ.1, էջ 924: (Այսուհետ՝ ՆՀԲ):

⁶Տե՛ս ՀԱԲ, Ե., 1973, հ.2, էջ 359:

ԲՁ-ում *խէչէփարը* քանիցս գործածվել է նոր՝ «քաղցկեղ» ախտանվան իմաստով. «Վասն *խիճիփրի*, որ ի վերի սպավայքն լինի» (42): «Եւ *խիչիփարն*, որ լինի յոտքն <ու> վ ի ձեռքն, նշան է, որ լինի ի դրուց՝ դիհն ի խակին» (99): «Յաղագս *խիչիփրի*, որ ներքեւ անդամոցն լինիկամ ի յայլ տեղ»: «...ու թէ ի տեղ լինի *խաչիփարն*, որ կարես հանել, դու հան. և ծառայէ զեղ խոց մի այլ» (158):

Պետք է նկատենք, որ բժշկական տերմինի արժեքով սույն կենդանանունը գործածվել է դեռևս 12-րդ դարում Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» երկում. «Մկնատամներ այնէ և ծաղիկ և քութեշ և *խէչէփար*»⁸: «..և գմարդն սաւոյոտ առնէ և ծաղիկ և *խաչիփար* և խոզք առնէ» (Աբուս.,161): 13-րդ դարում արդեն Գրիգորիսը իր բժշկարանում տալիս է հիվանդության նկարագրությունը և վերջինիս համար առավել հաճախ կիրառում նշված ախտանունը. «...անուանեն զինքն սարատայն, որ է *խէչիփար*: Եւ իւր նշանն այս է, զի ունի պնտութիւն յոլով՝ զերդ քար, և իւր կերպն ի խէչիփար նման է» (ԳԲ, 33): «Եւ այս *խէչիփարս*՝ ի յամեն մարմինն լինի, և իւր ընծայիլն ի յայնժամն լինի, որ փոփոխական գորութիւնն վատուծէ» (ԳԲ, 36): «Եւ այլ կարէ լինել, թէ այս նեղս ի յելունդէն լինի, որ անուանի *խէչիփար* և իւր լուծումն սև լինի» (ԳԲ, 138): «Եւ այս նեղս շրջի ի յայն ուռիցն, որ *խէչիփար* անուանի, որ է պինդ ուռից» (ԳԲ, 171):

Ուշ միջնադարում *խէչէփար* ախտանունը կիրառել է նաև Ամասիացին. «Յանձն վատուծութիւն երևցնէ և շտեր և *խէչէփար*»⁹:

ՄՀԲ-ն բառը հստակ բնորոշում է իբրև բժշկական տերմին՝ «քաղցկեղ» իմաստով, նշում է լատիներեն համարժեքը՝ *cancer*¹⁰, որի առաջնային նշանակությունն է *խեցգետին*: Պետք է նկատել, որ գրեթե բոլոր լեզուներում էլ երկկենցաղ այս կենդանու անունը նաև *քաղցկեղ* հիվանդության իմաստն ունի (ոս. рак, հն. karkinos արաբ. sarāṭān, պրսկ. sarātān), և դժվար է հստակ ասել, թե բառն արդյոք ո՞ր լեզվից է թարգմանվել: Այդ մասին թերևս հուշում է Մխիթար Հերացին՝ իր բժշկարանում *խեցգետին*-ը իբրև ախտանուն կիրառելով. «Հոռոմն *կարկինոս* ասէ, որ է *խեցգետին*»¹¹:

Նշենք նաև, որ հայերենի բառապաշարում ամրագրվել է ախտանվան հենց *խեցգետին* գրական տարբերակը, թեև իբրև բժշկական տերմին գոր-

⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.2, էջ 313:

⁸ Աբուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն, Ե., 1974, էջ 52: Այսուհետ՝ Աբուս.:

⁹ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940, էջ 52: Այսուհետ օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՍՕԲ համառոտագրությամբ:

¹⁰ ՄՀԲ, էջ 319:

¹¹ Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832, էջ 113: (Այսուհետ օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀՁՄ համառոտագրությամբ):

ծում է քաղցկեղը¹²:

բ) **Կաղապարային փոխառություններ**: Գաղտնիք չէ, որ միջնադարյան հայ բժշկությունը մեծապես կրել է արաբականի ազդեցությունը, և այդ ազդեցությունը երևում է նաև հայերեն տերմինաստեղծման մեջ, որտեղ զգալի կիրառություն ունեն արաբերենից բառացի թարգմանված՝ պատճենված բառերը: Նշենք, որ դրանց մի մասը գործուն կիրառություն ունենալով ամրագրվել է մեր լեզվի բառապաշարում:

ԲԶ-ում, ինչպես միջնադարյան բժշկարաններում առհասարակ, կիրառվել են *կենդանանուն + ցավ կաղապարով* ախտանուններ, ինչպես՝ *արծվեցավ, գայլցավ, ըղտացավ, պախրեցավ, քուռակցավ*: Նշված կաղապարում *ցավ*-ը հիվանդություն է նշանակում, այսինքն՝ տերմինը մատնացույց է անում տվյալ կենդանուն նման կամ բնորոշ հիվանդություն: Այս կաղապարը բնորոշ է արաբերենին, որից էլ բառացի թարգմանությամբ, կամ պատճենմամբ են ստեղծվել աղվեսացավ, *առյուծացավ, փղացավ, օձացավ ախտանունները*¹³:

Վերոնշյալ կաղապարով ԲԶ-ում գործածվել է **արծվեցալ** «ջրգողություն» նշանակությամբ ախտանունը, որը հանդիպում է նաև *արծուիք* տարբերակով «Յաղագս *արծվեցալու*: Նշանքն է, ուռենայ փորն և ոտվին եւ ձուերն» (138): «Վասն որ արծուիք լինի» (40):

Շ. Աճառյանը նշում է, որ *արծուացավ*-ը հոմանիշ ձևն է «մի տեսակ ջրգողություն» նշանակող *արծուիք*-ի, որը կազմվել է *արծիվ* գոյականի գրաբարյան *արծուի*-ի հոգնակիցի¹⁴:

ՆՀԲ-ն բերելով բառը՝ վկայակոչում է և ռամկական ոճով գրված բժշկարանները և «Գիրք վաստակոց» թարգմանական երկը¹⁵:

ՄՀԲ-ն բառը հստակ բնորոշում է իբրև բժշկական տերմին «ջրգողություն, փորի ջրակալում» իմաստով և նշում լատիներեն համարժեքը՝ **ascites**:

Այս ախտանվան առաջին գրավոր վկայությունը թերևս Հերացու բժշկարանում է հանդիպում. «որ օգտե... *ի յարծուեցն*՝ որ կոչի մսի *արծուիք*, և յորդէ ջրհեղն» (145):

¹² Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 2, էջ 260:

Շամանակակից հայոց լեզվի բառարան, հ.2, Ե., 1972, էջ 514 (այսուհետ՝ ՇՀԼԲԲ), **Էդ.**

Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԱՀԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 577:

¹³ Տե՛ս *Գր*, 41, *ԱՍՕԲ*, 113: **Բունիաթ Մեքաստացի**, «*Գիրք բժշկութեան տումարի*», Ե., 1987, էջ 117: (Այսուհետ՝ ԲՄ համառոտագրությամբ):

¹⁴ *ՀՄԲ*, հ.1, էջ 320:

¹⁵ Տե՛ս *ՆՀԲ*, հ.1, էջ 362:

13-րդ դարի բժշկարաններում *արծվիք*-ը արդեն աչքի է ընկնում գործուն կիրառությամբ, ինչպես. «Եւ այս ուռուցս կարէ ընծայիլ ի քամոյ, որպէս և *արծուիքն* և բարակցաւութիւն» (ԳԲ, 31): «Զի երեք են *ըստըսիսայքն*, որ են արծվիքն» (ԳԲ, 149): «Ակոսացաւի օգտէ, զմաստի և *արծուեաց*»¹⁶:

Արծվիք հիվանդության դիմաց բժշկապետ Գրիգորիսը նշում է արաբերեն *ըստըսիսայ* համարժեքը, որ բառացի նշանակում է «ծարավ»: Ի՞նչ կապ ունի *արծիվ* թռչունն այս հիվանդության հետ: Պարզվում է, որ այս հիվանդությամբ տառապողները միշտ ծարավի զգացողություն ունեն: Թերևս առնչությունն այն է, որ արծիվը կարող է օրերով ջուր չիմել, քանի որ կենդանիների արյամբ է հագնում¹⁷: Նկատենք, որ Գրիգորիսի բժշկարանում նշված հիվանդությունը հանդիպում է նաև հենց *արծիւ* ձևով. «...որ *արծիւ* ունի և իւրն հազ պատահէ՝ վատ նշան է» (210):

Արծվիքը՝ իբրև ախտանուն, կիրառվել է նաև Ամասիացու, ապա նաև՝ ուշ միջնադարի բժշկարաններում. «Յորժամ ստամոքն աւելի *արծուիք* առնէ» (ԱՍՕԲ, 307): «Ըսթսիսա, որ է *արծուիք*» (ԲՄ, 100): «Զլերդին և զփայծղան կալուածն բանայ և օգտէ *արծուոց*»¹⁸:

Զնայած միջին հայերենում իր գործուն կիրառությանը՝ այս տերմինը չի պահպանվել և հազվադեպ նշումով արձանագրված է միայն Մալխասյանցի բառարանում¹⁹:

Գայլ կենդանու անվանմամբ և *ցալ* գոյականով ԲԶ-ում քանիցս գործածվել է *գայլցաւ* «գայլախտ» ախտանունը. «Վասն գայլցավի, որն է հովություն» (39): «Յաղագս քուսայի, որ է ազգ մի *գայլցավէն*» (129): «Դեղ գայլցաւու, եբ ուժով լինի» (ԲԶ, 107): «Յաղագս *գայլցաւի*: Նշանքն է. լարի շլնիքն և ակընջուին. քաշուի աչիցն սևուցն, որ սպիտկուցն շատ երեւնայ» (120):

ԲԶ-ից բացի, նույն 13-րդ դարում տերմինը կիրառվել է նաև Գրիգորիսի «*Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց*» բժշկարանում. «Մարդ, որ նեղ ունի, զոր ձգել ասեն և *գայլցաւ*, թէ ի Դ (4) օրն չմեռնի՝ ողջնայ» (ԳԲ, 213):

Պետք է նկատել, որ երկու բժշկարաններում էլ չի հանդիպում այս ախտանվան արաբերեն տարբերակը և բառը թերևս կիրառվել է մյուս ախտանունների նմանողությամբ՝ համաբանության սկզբունքով:

Իբրև միջին հայերենին բնորոշ տերմին՝ բառն արձանագրել է միայն

¹⁶ *Գիրք վաստակոց*, Վենետիկ, 1877, էջ 169:

¹⁷ <http://www.reading.ge/am/Արծիվ/>:

¹⁸ Տե՛ս Ասար Սեբաստացի, *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993, էջ 192:

¹⁹ Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 1, էջ 271:

Նորայր Բյուզանդացին (չունեն ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը)՝ վկայաբերելով հենց «Բժշկարան գրաստու» երկի վերոբերյալ օրինակը²⁰:

Գայլցաւ-ը գտնում ենք միայն ՄՀԲ-ում՝ «գայլուկ, գայլախտ» նշանակությամբ: Տերմինի լատիներեն համարժեքն է *lupus- գայլ* գոյականը, որն ունի նաև համապատասխան հիվանդության իմաստը: Հիվանդությունն անվանումը ստացել է իր բնորոշ նշանի՝ քթի և այտերի վրա ցանի (վնասված հատվածը ձևով հիշեցնում է թիթեռ) առկայությունն շնորհիվ, որը միջնադարում հիշեցնում էր գայլի կծածի հետք²¹:

Գայլցաւ ախտանունը չի պահպանվել հայերենի բժշկական տերմինաբանության մեջ, փոխարենը գործածվում են վերջինիս հունանիշ *գայլախտ* և *գայլուկ* տերմինները²²:

Ուղտ կենդանու անունով բժշկարանում գործածվել է *ըղտացավ* ախտանունը, որ մատնանշում է «գրաստի հիվանդություն»: Վերջինս ամենայն հավանականությամբ ձիու մկանային ախտահարում է և հենց դրանով է կապված սապատավոր ուղտի հետ. «Վասն, որ *ըղտացաւ* ասեն, որ լինի ի գրաստն» (39): «Յաղագս ցաւոց, որ կոչի *ըղտացաւ*: Նշանքն է. ցաւ, որ բնակի ի յետի կիցքն ի գաւակի, զի յորժամ հանես ի յախոռոյն՝ նա զյետի կիցքն ի հետև ի քաշ տանի ինչվի աղէկ երթայ ու ապա դորդի» (126):

Բժշկարանում ընդամենը երկու անգամ հանդիպող այս ախտանունը թերևս եզակի վկայությամբ կազմված բարդություններից է և այդ իսկ պատճառով անձանոթ է մեր բառարաներին: Բառը սույն բժշկարանի վկայմամբ արձանագրված է միայն ՄՀԲ-ում²³:

ԲՁ-ում երկու անգամ գործածվել է *պախրեցավ* ախտանունը, որ մատնանշում է «տավարի հիվանդություն»: *Պախրա* բառը, որ փոխառություն է ասորերենից գրաբարում արդեն բազմիմաստ բառ է և ունի 1. դրամ, ստակ, 2. ապրուստ, պարեն, 3. անասուն, տավար իմաստները²⁴, իսկ միջնադարյան բժշկարաններում առավելապես օգտագործվում է «տավար» նշանակությամբ: Միս. Հերացին այս իմաստով կիրառել է *պախրեմիս* նորակազմությունը²⁵:

²⁰Տե՛ս **Նորայր Բյուզանդացի**, «*Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*» (Մարտիրոս Մինասյանի հրատարակությանը), Ժնև, 2000, էջ 127:

²¹ <https://hy.wikipedia.org/wiki/>, Վիքիպեդիա, *Համակարգային կարմիր գայլախտ*:

²²Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 1, էջ 411:

Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԱՀԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 218-219:

²³Տե՛ս *ՄՀԲ*, էջ 219:

²⁴Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ.2, Ե., 2000, էջ 378:

²⁵Տե՛ս *ՄՀԲ*, էջ 635:

Ըստ Աճառյանի՝ միջինհայերենյան *պախրան* արաբերենից փոխառված *baqara*-ի ռասկոբեն ձևն է²⁶: Իսկ ԲՁ-ի *պախրեցավ*-ը ամենայն հավանականությամբ պատճենում է արաբերեն *داء البقر* *dā'al-baqar*-ից, որ բառացի նշանակում է հենց «տավարի հիվանդություն»: Այն դրսևորվում է որովայնի ուժեղ ցավով և լուծով, թեև այդքան էլ հստակ չէ, թե ո՞ր հիվանդության մասին է խոսքը: Եվ քանի որ ՄՀԲ-ից բացի ոչ մի բառարանում այս ախտանունը տեղ չի գտել մեզ մնում է միայն բավարարվել բնագրային օրինակները ներկայացնելով. «Վասն ցաւուն, որ *պախրեցաւ* ասեն» (39): «Յադագս ցաւուն, որ կոչի *պախրեցավ*» (112):

Պետք է նկատենք, որ ժամանակակից հայերենի բառարաններում վերոհիշյալ նշանակությամբ իբրև ընդհանրական ախտանուն ամրագրվել է *տավարի ցավ* բառակապակցությունը, որը գործածվում է նաև «անպիտան մարդ» փախաբերական իմաստով²⁷:

Նույն կադապարով է ստեղծված նաև **քուռկցավ** ախտանունը՝ «քուռակների գեղձախտ» նշանակությամբ. «Վասն *քուռկցաւի* ի կզակն» (40): «Այս ցաւս շատն ի քուռկնին լինի և կոչի *քուռկցաւ...* լինի այս ցաւս ի քուռկնին և ի մեծ գրաստնին, էլունդնի է պինդ, որ լիննայ ի ներքև խամձեկացն, և թէ պէտ չայնեն՝ պատոի» (137):

Պետք է նկատենք, որ բժշկարանում չի հանդիպում այս ախտանվան արաբերեն կամ այլալեզու տարբերակը, բայց կարելի է ենթադրել, որ *քուռկցավ*-ը կիրառվել է մյուս ախտանունների նմանողությամբ՝ համաբանության սկզբունքով՝ նշանակելով տվյալ կենդանուն բնորոշ հիվանդություն: Վերոնշյալ պարագայում *քուռկցավ*-ը ձիերի մոտ հանդիպող *խոզուկ* հիվանդությունն է: Նշենք նաև, որ այս ախտանունը չի հանդիպում այլ բժշկարաններում, արձանագրված է միայն ՄՀԲ-ում հենց ԲՁ-ի վկայմամբ²⁸:

գ) Ժողովրդախոսակցական փոխառություններ: Կեդանանուններով ստեղծված ախտանունների մյուս խումբը ժողովրդախոսակցական ծագմամբ բառերն են, որոնք կիրառվել են որպես փոխառյալ տերմինների հայերեն համարժեք: Դրանք հիմնականում ժողովրդական մտածողությունն արտահայտող կազմությամբ բարդ բառեր են, որոնք առավելապես բնորոշ են բարբառներին:

Ժողովրդական մտածողության արտահայտություն կարելի է համարել **հաւկոյր** բառի՝ «հավկուրություն, հավկուրությամբ տառապող» ախտանվան

²⁶ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 7:

²⁷Տե՛ս՝ ՄՀԲԲ, հ. 4, Ե., 1980, էջ 454): **Էդ. Ադայան**, ՄՀԲԲ, հ. 2, Ե., 1976, էջ 1415:

²⁸Տե՛ս՝ ՄՀԲ, էջ 816:

իմաստով կիրառությունը. «Վասն որ *հաւկոյր* լինի» (41): «...և այն լինի ի խիստ ցրտոյն և կամ յարեգակնէն և կամ ի ձոյնէն: Եւ *հաւկոյրն* գնոյնն» (92):

Հավկուրությունը տեսողության խանգարման մի տեսակ է, որն արտահայտվում է թույլ լուսավորության պայմաններում (մթնշաղ, գիշեր) առարկաները տեսնելու ընդունակության թուլացմամբ կամ կորստով²⁹: Այս հիվանդությունը բժշկության մեջ հայտնի է *հեմերալոպիա* տերմինով, որ հունարեն ἡμερόλαψ-ն է, կազմված է *hemera-ցերեկ*, *alaos-կույր*, և *աչք* բաղադրիչներից³⁰: Ռուսերենում կիրառվում է սրան համարժեք բառակապակցական տարբերակը՝ *дневная слепота*: Նկատենք, որ լեզուների մի մասում էլ ախտանունը կիրառվում է հակառակ՝ «գիշերը կույր» իմաստով: Ի դեպ, միջին հայերենում ունենք նաև *գիշերակույր* բառը՝ կիրառված հենց անասունների համար³¹: Իբրև ախտանուն, սակայն, բժշկարաններում կիրառվում է մի շարք բարբառների³² հարազատ *հավկուր*-ը՝ նկատի ունենալով հավի գիշերը չտեսնելու հանգամանքը: Հայերեն *հավկուր* ախտանունը առաջին անգամ թերևս գործածվել է Գրիգորիսի բժշկարանում որպես պարսկերեն *շպքարայ*-ին (*šab-kuri*<գիշերային կույր) համարժեք. «Եւ շպքարայն, որ է *հաւկոյր*՝ սայ է, որ գիշերն ամեննին չտեսնու» (ԳԲ, 88):

13-րդ դարից հետո *հավկուր*, ինչպես նաև *հավկուրություն*, ախտանունը լայն գործածությամբ աչքի է ընկնում նաև ուշ միջնադարի բժշկարաններում³³: Նշենք որ բառը պահպանվել և իբրև բժշկական տերմին ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում³⁴:

ԲԶ-ում մեկ անգամ կիրառվել է **ձիախոց** «գրաստների մանր թարախային խոցերով ընթացող հիվանդություն, ձիու քոս» ախտանունը՝ որպես ֆրանսերեն *ֆարսին* *farcin* տերմինի հայերեն համարժեք. «Յաղագս վիրաց, որ ի ֆրացինն, որ կոչի *ձիախոց*: Ելնէ ելրնդնի ի գրաստուն երեսն ու բազկունքն և ապա հաւսրի ի յամէն մարմինն» (119):

Ըստ Աճառյանի ֆրանսերեն ձևը ծագում է լատիներեն *farciminum*-ից³⁵, որ մատնանշում է ձիերին բնորոշ մաշկային թարախալից խոց³⁶:

Այս ախտանունը հանդիպում է միայն սույն բժշկարանում, գրանցված

²⁹ <https://hy.wikipedia.org/wiki/>, Վիքիպեդիա, ազատ հանրագիտարան, *Հավկուրություն*:

³⁰ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 325

³¹ Տե՛ս *ՄՀԲ*, էջ 142:

³² Զ. Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ, 651: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.3, էջ 251:

³³ Տե՛ս *ՄՀԲ*, էջ 419:

³⁴ Է. Աղայան, *ՄՀԲԲ*, Ե., 1976, էջ 837:

³⁵ Տե՛ս *ՀԱԲ*, հ.4, էջ 622:

³⁶ Տե՛ս *ՄՀԲ*, էջ 830:

չէ բառարաններում և միայն ՄՀԲ-ն է արձանագրում՝ հենց վերոնշյալ օրինակով³⁷:

Միջնադարում շրջանառվող մաշկային հիվանդությունների շարքին է դասվում *մկնատամ*՝ «որքին» տերմինը (lichen), որը ևս գործ է ածվել ԲՁ-ում. «և կամ չթողու, որ հեծնուս զինք, նա լինի ի շատ *մկնատամերոյն*, որ ելնէ ի թամբուցն ի տեղն» (95): «Յադագս *մկնատամերոյ*. Նշանքն այն է. եք ելնէ *մկնատամն* ու թամբեն զգրաստն, նայ խոցնայ» (118):

Ախտանվան ստեղծման գործում ըստ երևույթին դեր է խաղացել ցանի նմանությունը մկան ատամին: Առաջին կիրառությունը թերևս հանդիպում է 12-րդ դարում՝ Աբուսայիդի բժշկարանում. «և մարդիկն, որ դիպի *մկնատամներ* ելանէ և ծաղիկ» (Աբուս, 136):

15-րդ դարում այս տերմինը գտնում ենք նաև Ամասիացու բժշկարաններում. «Նշան *մկնատամին* այն է, որ ուռեց ի յանդամն լինայ» (ԱԱՕԲ, 483): «Թէ գտերնն ծեծես, և մեղրով խառնես, և դնես ի վերայ *մկնատամին* օգտէ»³⁸:

Մկնատամ բառը բնորոշ է նաև հայերենի մի շարք բարբառների³⁹:

Միջնադարում ակտիվ գործածություն ունեցած այս տերմինը նույն իմաստով ամրագրվել է ժամանակակից հայերենի բառապաշարում⁴⁰:

Մաշկային մեկ այլ հիվանդություն՝ եղնջացանը, ԲՁ-ում արտահայտվել է *մրջուն* միջատի անվամբ և -ոց վերջածանցով բաղադրված *մրջմնոց* / *մրջմնուկ* ախտանվամբ. «*Մրջմնոցն* ցաւ է, որ լինի ի սմբակքն և յայլ տեղեստան» (101):

Հ. Աճառյանը բառը բացատրում է ըստ Երեմիա Մեղրեցու բառարանի՝ «խաղավարտ բշտբշտացեալ» և նշում բարբառներում կիրառվող *մրջմնուկ*, *մրջմբոյն*, *մրջիմնոց*, *մրջիւննոց*, *մրջիւնոցք* ձևերը, որոնք նշանակում են մաշկային «հիվանդություն, երբ մորթը թեփոսվում է, միշտ բորբոքվում և քոր գալիս»⁴¹:

Հետաքրքրական է, որ նշված հիվանդության անվանումը այլ լեզուներում կապվում է *եղինջ* բույսի հետ (lt. Urticaria, ու. крапивница), սակայն միջին հայերենում և մի շարք բարբառներում՝ մրջունի⁴²: Այստեղ նկատի է առնվում մարմնի վրա մրջունի պէս տարածվող մանր ցանը: Ի դեպ,

³⁷ Նույն տեղում, էջ 447:

³⁸ **Ամիրզովյաթ Ամասիացի**, *Անգիտաց անպէտ*, Վիեննա, 1926, էջ 72:

³⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն գաւառական բառարան*, Էմինետան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ, 785: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.4, Ե., 2007, էջ 64:

⁴⁰ Տե՛ս **Է. Աղայան**, *ՄՀԲԲ*, հ. 2, էջ 1018:

⁴¹ *ՀԱԲ*, հ. 3, Ե., 1977, էջ 371:

⁴² *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ, Ե., 4, 2007, էջ 89:

նշենք, որ արաբերենում նշված հիվանդությունը *نملة* namla է կոչվում, որ բառացի *մրջյուն* է նշանակում: *Մրջմնոց* ախտանունը կիրառվել է նաև 13-րդ դարի մյուս Գրիգորիսի բժշկարանում. «Եւ նմէն, որ է *մրջմնոց*, և իւր ընծայիլն այն է, որ ճեղքէ զեզերս կոպին և թափէ զկոպացն զմազն» (Գր, 86): «Եթէ *մրջմնոցն* ի նոսր արեւնէ լինի և ի խարտէշ մաղձէ: Եւ թէ այս մաղձս միջակ լինի... ընծայի յիւրմէն *մրջմնուկ*» (ԳԲ, 30):

Այսպիսով՝ «Բժշկարան ձիոյ» երկում կիրառվել է կենդանիների անվանումներով բաղադրված տասնմեկ ախտանուն՝ *արծվեցավ, գայլցավ, գորտն, ըղտացավ, խեչիփար, հաւկոյր, ձիախոց, մկնատամ, մրջմնոց, պախրեցավ, քուռկցավ*: Սրանցից չորսը՝ *ըղտացավ, ձիախոց, պախրեցավ, քուռկցավ*, գործածվել են միայն այս բժշկարանում, իսկ մնացյալը գործուն կիրառությամբ հանդիպում են նաև միջնադարյան մյուս բժշկարաններում: Վերջիններս բոլորն էլ միջնադարում ունեցել են բժշկական տերմինի արժեք, դրանցից երկուսը՝ *հաւկոյր, մկնատամ*, պահպանվել և իբրև բժշկական տերմին արձանագրվել են նաև ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում, *գայլցավ-ի* փոխարեն ամրագրվել են դրան հոմանիշ *գայլուկ, գայլախտ* տերմինները, իսկ *խեչիփար-ի* և *պախրեցավ-ի* փոխարեն՝ դրանց համարժեք *խեցզետին* և *տավարի ցավ* ախտանունները:

Асмик Татевосян, Названия болезней, созданные именами животных в произведении “Лечебник лошадей” (XIII в.). - В статье рассматриваются одиннадцать названия болезней, созданные именами животных, которые употреблялись в медицинской произведении 13-го века “Лечебник лошадей”. В средние века эти слова использовались в медицинской терминологии, четыре из них (*ըղտացավ, ձիախոց, պախրեցավ, քուռկցավ*) применялись только в этом лечебнике, пять остались в словарном запасе средне армянского языка, а двое – *հաւկոյր (куриная слепота), մկնատամ (лишай)*, сохранились и были зафиксированы в толковых словарях современного армянского языка.

Hasmik Tadevosyan, Diseases Named after Animals in the Work "Book of Cures of Horses" (13 c.). - The article discusses eleven names of diseases created by the names of animals that were used in the 13th-century medicine book “Book of Cures of Horses”. In the Middle Ages, these words were used in medical terminology, four of them (*ըղտացավ, ձիախոց, պախրեցավ, քուռկցավ*) were used only in this work, five remained only in the Middle Armenian vocabulary, and only two - *հաւկոյր (night blindness), մկնատամ (lichen)*, preserved and recorded in the Modern Armenian explanatory dictionaries.

